



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պոլեմարենը բոլոր լեզուների, միացե՛ք

№ 9

ՄԱՐԿ ԿՈՆՍՈՎ

ՏԱՄՆԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆԸ

(Պատմավաճ))

ԳԻՆՆ Ե
15 Կ.

891.71

4-64

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏԿՈՄԻ
ՅԵՐԵՎԱՆ—1924

25 SEP 2006

891.71
4-64

Պարբերականը բոլոր լեզուներով, միացե՛ք

№ 9 ԿՈՍՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

ՄԱՐԿ ԿՈՆՍՈԿ

25 NOV 2010

ՏԱՄՆԵՐԵԺ ՏԱՐԵԿԱՆԸ

(Պատմվածք)

Թարգմ. Ա. Խ.

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

2861

Handwritten signatures and initials



ՀՐԱՅՈՒՐԱԿՈՒԹՅՈՒՆ
BIBLIOTEKA UKRAINI
В КИЇВІ.

2.2.05.2013

21093 11721

ՅՈՒՐ ԿՈՒՆԱԿ

ՄԱՐԿ ԿՈՒՆԱԿ

ՏԱՄՆԵՐԵՔ ՑԱՐԵԿԱՆԲ

Պատմագած

I

Վանկան տասերեր տարեկան է. ու տասներեր տարեկան լինելն զգացվում է նրա ամեն ինչից: Կարծես տասներեր փոքրիկ դեեր՝ թռչկոտում նրա տասներեր տարիները, յերբ Վանկանուրախ է և լուռ կծկվում են նրանք, յերբ նա ախուր է լինում:

Ինքը Վանկան ել է փոքրիկ, վախ - բուրդը թողած կապի ձագի պես, -- կարծես իր տասներեր տարիների զոհը լինի: Այդ նա չի բաժանմունքից -- բաժանմունք անցնում, ծղրտում և ամեն մի հանգիստի ձեռք սեղմում, յերբ իրենց գործարանից Մոսկվայի խորհուրդը կոմունիստ պատգամավոր է ընտրվում: Նա չի, վոր մոլեղնությամբ շփացնում և իր բարակ ձայնով «կորչի» յե կանչում, յերբ վոր այս կամ այն մենշևիկը փորձում է խաբել նրա ընկերներին: Այդ նրա տասներեր տարիներն են անում:



3692-53

Իսկ ինքը Վանկան հանգիստ է. հանգիստ համեստ ու անվստահ:

Յեւլ յեթե պատահում ե, վոր գործարանի գլխին փակվելու փոթորիկ ե կախվում— Վանկան իր վողջ եյութճամբ զգում ե, թե ինչպես են անհանդիստանում իր տասներեք տարիները,— և դրանից նրա վողորկ մանկական ճակատին գորշ ձորակներ են գոյանում, ու այլևս միջանցքներում նրա կոկորդի բոժոժիկները չեն գնդգնգում: Լուս ստվերի պես ե թրեվում կապույտ յուղոտած վերնաշապիկ հազած ադան ու չգիտե՞ թե ուր չքվի:

Կառավարչի մոտ վախենում ե գնալ Վանկան, թե ե գիտե, վոր նա կարմիր կառավարիչ ե, յուրային — բանիոր ե կոմունիստ: Առանձնասենյակը մի սեռակ ճնշում ե նրան իր տեսքով: Լրջութուն ու խստութուն ե փշում նրանից ու թվում ե, թե պտտերը գալիս մոտենում են իրար և ուր վոր ե պիտի թափվեն փոքրիկ Վանկայի գլխին ու ճխլեն նրան: Իսկ այդ պտտերը— պտտերին՝ «կարճ խոտեր», «ժամանակը վոսկի յե», և ելի ուրիշ շատ լուզունգներ են փակցրված: Ինքը ծեք Լենինը, թանկագին ու հարագատ Վլադիմիր Իլյին ել ե նրանց շարքում ու ժպտալով հորցնում ե.

— Վանկա, ինչն լես յեկեր, Այսպես-այնպես

լինես դու, մի խանգարի կառավարչին...

Ու միջանցքով դեպի բակ ե գնում Վանկան, բակից արհեստանոց ե անցնում ու այնտեղից ել կողքի շենքը, վորի փոքրիկ դռան վրա մեծատառերով համեստ

ՌԿՅԵՄ Բ.ՋԻ.Ջ

բառերն են գրված:

Վանկան տասներեք տարեկան ե, իսկ կանոնադրությամբ տասչորս ե պահանջվում: Հենց այդպես ել գրված ե. միության անդամ կարող ե լինել ամեն մի անչափահաս բանվոր, սկսած տասնչորս տարեկան հասակից:

Իսկ այժմ կարելի յե խորհրդակցական ձայնի իրավունքով ընդունել: Ախ, ինչպես չի սիրում խորհրդակցական ձայն ունենալ— խիստ վիրավորական ե: Գրիշան, չե վոր, վճռական ձայն ունեցող անդամ ե, մինչդեռ միևնույն դասարանում ե միևնույն արհեստանոցում են... Զեղկան, Սենկան, Վասկան, Ստենկան, նույնպես և Վանկա Լուրդը— ինչով ին լավ իրանից:

Վողջ դժբախտությունը տասներեքի մեջ ե:

Յեւլ յերբ վոր պատահում ե ժողովում բանաձև են հանում, և ձեռքերի անտառե բարձրանում գլուխների շիկահեր մամուռի վրա— ամբողջ սրտով ուզում ե, ուզում ե ձեռքը մյուսների

պես բարձրացնի, բայց վախենում ե—նրան թվում է, թե բոլորն ել իրեն են նայում և իսկուհն պետք տան «Վանկա, մի մտանա կանոնադրությունը»:

Յերեկոյան ընդարձակ ակումբում ժամանցի յե հավաքվում փողջ զսրժարանը: Մեծերն ընթերցարանում լրագրով են գրադվում, յերիտասարդությունն ել՝ ով ինչով կամենա:

Առաջին հերթին ազջիկներն են գրագարան գնում—Մասրովի մօտ:

—Մի լավ վեպ տվեք:

—Սա ի՞նչ նորություն է:

Լսում են, Շուստրայա Մանկայի յետն են պահվում: Իսկ Շուստրայա Մանկան հանդուգն ու նազկոտ ձայնով ասում է.

—Վեպ ենք ուզում, ելի, ախպես, փոր հետաքրքրական լինի ու մեջը՝ սեր...

—Գժվել ես, ի՞նչ է. գիտես, չե, փոր դրանք մեզ համար չեն, այլ գիմնագիտյի աշակերտուհիների համար:

—Բայց մենք ինչո՞վ ենք վատ գիմնագիտյի աշակերտուհիներից:

—Գե, շուտով հեռացիր:

Մանկան արագ շարժումով ձետքը թևատակն է տանում ու մի գիրք է հանում, իսկ գրքի ճակտին դրված է.

«ԲԱԽՏԻ ԲԱՆԱԼԻ»

վեպ Վերբիցկայայի:

—Իսկ այս տեսել եք:

Ու ծըլկ—դահլիճ, իսկ նրա հեռեից, պոչի պես, մնացածները:

Գահլիճում կիսամութ է: Քարտերի, պլակատների և կոչերի շարքում աչքի յե ընկնում «Աշխատանքի որենքների ժողովածուն», իսկ «Ժողովածվի» առաջ շահեկների մի խումբ Միտրիյի պատմությունն է լսում,—իսկ Միտրին՝ «Բյուրոյի» առաջին անդամն է: Միտրին աստղծու մասին է խոսում: Ու թվում է, թե Միտրիի գանգում—գինամո յե դրված, ու գինամոյից բարակ անտեսանելի լարեր են անցնում դեպի իր շուրջը վիտացող տասնհինգ գլուխները: Ուղեղների մեխանիզմը պտույտ է գալիս:

Մանկան ծղրտում է.

—Ախ, Վանկա, Վանկա, այստեղ...

Ու յերգում է.

Վանկա, Վանկա, Վանուշ,

բոյզ պատիկ—մի փուշ,

մենք միության անդամ,

մենք հեղափոխական,

դու անկուսակցական,

դու յես մենակ տեսածն.



ասա, փոքրիկ փիշխոււլ:

Ո՛ւր ե քո տամար, ո՛ւր:

Վանկան ցնցվում է, ու հաղորդիչ լարը կտրվում է:

Միտրին մեղմ ձայնով ասում է.

— Ինչո՞ւ յես խանգարում: Լավ կանես, վոր յես թե ինչ են ասում:

— Ի՞նչ եք ասում վոր: Գլխներըցդ դուրս եք տալիս... իսկ դու յեղբորդ մի պաշտպանիր — ինքն իրան կպաշտպանի:

Ֆեդկան շշնջում է.

— Վանկա, Մանկային մեկը հասցրու... .

— Թող կորչի... .

Չարության վորդը խլրատում է Վանկայի սրտում:

Իսկ Մանկան ու աղջիկները, յետ-յետ դեպի տղաներն են գնում ու սեղմ ուղակով նրանց շուրջն են պատում:

— Միտրի, հեղափոխության են վառ պատմություններըց պատմիր:

Ճերմակ ամալի պես ցրվում է չարությունը

— Լավ է ասում, հեղափոխության կռիվներըց պատմիր:

Գիշերը մութ մզլած սենյակում քնած եր Վանկան Միտրիի հետ միասին միևնույն մահ-ձակալի վրա: Միտրին քաղցր ու խորը քնած եր.

Նրա տաք քթի ուռնգերը լայնանում ունեղանում, դու շունչ ելին արձակում:

Յերկար նայում է Վանկան յեղբոր վճռական դեմքին, ազահությամբ նրա սրտի գարկերն է վորսում, ծանր ողն է շնչում և մեղմ ձայնով ասում է.

— Միտրի, ա՛յ Միտրի... .

— Ի՞նչ է:

— Յես են բջիջի... .

Հ՞ը, ինչ է. ելի՞ դարձը... վաղը, վաղը... .

— Չե, դրա մասին չե, յես... .

— Միևնույն է—վաղը. թող քնենք... .

— Ինչո՞ւ անպատճառ ասաչորսից:

— Ինչնե՞ տասնչորսից:

— Կանոնադրության մեջ... .

— Ի՞նչ կանոնադրություն:

— Ռեկրյեմի... .

— Ռեկրյեմի կանոնադրության մեջ այդ նրա համար է գրված, վոր քեզ պես փիշխույնները դեպի միություն չվազեն: Հասկացա՞ր:

— Հասկացա: Բայց: Միտրի... . ինչո՞վ եմ յես վառ ուրիշներըց:

Միտրիի ձայնը շար է և դժգոհ:

— Չի կարելի... . գիտես, վոր չի կարելի, լակոտ, ելի ո՛ւր ես քիթդ խոթում... . Գորեւ է իր դուզուկն ու ել վոչինչ չի ուզում լսել... . Գնիր,

ասում եմ, ու զուր տեղը ականջներս մի տանի...

«Ուուհ .. անիծյալ»... Ղրաձգվում են Վանկայի մաքերը, հանդուղն ու չար: Ծանրացել է դուխը և նույնիսկ կուրծքն է ճնշում:

— Լավ, Միտրի, լավ: Դեռ ակտիվիստ ել ե: Ուշ գիշերով քամին է վունում փողջ շրջակայքով մին. պարուս է ասես մի մոլեգին կոմյերիտական: Աստղերը զանազան ձևվերով են թարթում— մեկը համաձայն է, մյուսը վոչ, ու ժողովը առավոտվա դեմ է վերջանում:

Յե՛վ յերբ վոր այլևս վոչ քամի կա, ու վոչ աստղեր և թանձր մշուշն է սքողում յերկնքի լարանը— սև կաշե բաճկոն հագած Պետրոսն ձրվում է դործարանի բարակ ջիլը, ու գոռում է դործարանի բարանային կոկորդովը մին: — Ո՛ւ... ո՛ւ... ո՛ւ... ո՛ւ...

Կամացուկ վոտքի յե յերնում տանը մայրը: Մյուս սենյակից նրա զգվոցի և քաղցր հորանջի ձայնն է լսվում.

— Ոոֆ-ոֆ-ոֆ... Մեղա քեզ, տեղ:

Սպիտակ սավերներ են սողում պատերով, լուսեղեն բոլորչիներով դեպի կարնիզներն են բարձրանում, Մարքսի միրուքի մեջ են խճճվում: Փորձով գիտի Վանկան ու սպասում է, վոր ահա կգար թնի հայրը ու կասի փափկությամբ. «Կնիկ, ա կնիկ, հեշտայեռը դնես», իսկ հետո,

նվելի բարձր ձայնով՝ «ե՛յ, կոմսոմոլ, վեր կաց, տես, մերը մեզ համար է չարչարվում»: Ու թրվում է Վանկային— թե հայրիկը զիղմամբ է կոմսոմոլ բառն ասում: Չե՛ վոր լավ է իմանում, վոր Վանկան տո՛մս չունի:

Առավոտյան դժժում է հեշտայեռը, կարծես հին կարիչով յերկաթ են կտրում, առավոտյան լուսամուտների ապակիների վրա քրտինքն է մնացել անցած դրշերվա: Հայրիկն ու Միտրին թե՛յ են խոսում, կուսակցական աշխատանքի մասին են խոսում: Մայրը ձեռքերին ծնոտն է հենել, Վանկային է նայում: Մայրիկի աչքերը քաղցր են, փաղաքշող.

— Խմիր, խմիր, Վանուշ, հացով խմիր, վոր դիս: Բոլորովին լղարել ես դու ձեր եզ Ռեկրյեմում...

Վանկայի սրտում վիրավորանքը յեռացրած ջրի պես թշշում է: Մխ... ինչ ատելի յե մայրիկն իր փաղանքանքներով, իր հողատարությամբ, ինչքան է ուզում Վանկան հոր ու յեզբոր խոսակցությանը մասնակցել:

II

Ժամանակը այդ ահագին Լիվերտ*)— որե-

*) Լիվերտը ժամայինների գործարանի գլխավոր մեքենան է:

րի անվերջ ժանյակն և հյուսում: Սպիրտակ ու կարմիր շերտերով ձգվում, համաշխարհային գլխանակի վրա յե փաթաթվում ժանյակը:

Իսկ հազարավոր կենդանի մարդիկ կոճառ-կոճ կծկում են իրենց ուժերը, բարակ թևերի պես ձգվում, հյուսվում են կյանքի շարժ-փող ժանյակին: Ուժ թելը պրծավ — գուրս կր-զցեն մեքենայից: Նոր թարմ կոճեր, վարդագույն մեաաքսե թելը վրաները — հում նյութերի բաժնում հերթի յեն սպասում:

Քաղցրագիտության ուսուցիչ Ֆյոդոր Իվանիչ ընկեր Ռոդինն ասում և, վոր կյանքը գեղի կամունիզմ է գնում: Յեվ կյանքի լիվերսը բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչ կուսմունխտաներն են բանեցնում: Մեկ-մեկու գողված այդ մարդիկ ամուր, պողպատե սանրով միլիոնավոր թեյեր են սանրում, ամենաբարդ նախշեր են տալիս նրանց:

Իսկ ամենագլխավոր շուրհակը-Վլադիմիր Իլիչն և, և Տրոցկին ու Կալինինը նրա ոգնականներն են:

Գժվարություն են քաշում յերբեմն կոճերը, գժվարություն և քաշում պողպատե սանրը, գժվարություն են քաշում ոգնականները, բայց ամենից մեծ գժվարությունը՝ գլխավոր շուրհակն և քաշում: Շարժվում, քրթմնջում են ա-

նիվները, փրփուրի մեջ չփչվում են պտուտակները, համաշափ կերպով տրոփում են հագորդիչները, շրշում են կաշվե ուղիները: Թեև փոշի յե բարձրանում, գեմքերին ու վերնաշապիկներին և նստում, մարմիններն և թունավորում շուրհակների: Մեկել տեսար մի ինչ վոր բան ճըկբտաց, պայթեց ու կանգ առավ հսկայական մեքենան: Միայն գլխավոր շուրհակն և, վոր չի ալլալվում և մեկել նրա ոգնականներն են անհողգողգ մնում:

Գիշերը սև մզլած սենյակում իր յեղբայր Միտրիի հետ միևնույն անկողնում է ընում Վանկան: Քնած է Վանկան: Յերազում տեսնում և, իբր թե Լիվերսի բաժանմունքին հսկայական գորության չմի շոգեկառք մոտեցավ: «Վուսու», մանչաց, շարժվեց, գնաց, գնաց դեպի Մոսկվա-գետը, գետն ել ամենեվին գետ չի, յայլ ծով է, սոցիալական հեղափոխության ծով: Շոգեկառքն, առանց մտածելու, ալիքների մեջն և մտնում: Ալիքները բարձրանում, տանիքի վրայով մյուս կողմն են թափվում, շոգեկառքի ներսն են վողողում: Հնոցի բոցը բորբոքվում և, ծովի ագան լեզուներն և այրում, և թշշում, թշշում են ամուրի կտորները:

Իսկ հնոցազանը Վանկան և:

Բշտիկներով է ծածկվում նրա կաշին: Ա-

Իսկ հնոյ ապամը վանկան է:

Բշտիկներ են բարձրանում կաշու վրա, և ալիքները, սպիտակ բլրակների պես, վրա յեն տալիս, լիզում, պայթեցնում են այդ բշտիկները: «Ա՛խ ... Ի՞նչ լավ կլինի հեռանալ այս անիծյալ հնոցից, ալիքների գիրկը նետվել, զովաքանել մարմինը»: Բայց մի ձայն կանչում է վանկային:

Հը, հոգնեցիր, ընկեր Նազարենկո (վանկայի ազգանունն էր):

Նայում ե և ինչ տեսնի—լենինն է:

Սրտում փրփուր է բարձրանում: Դեեր են թռչկոտում փրփուրում: Եխ, պարում են շան ծրնունդները:

—Ձե, չեմ հոգնել, ընկեր Լենին:

—Իսկ ի՞նչ ես կարծում, շոգեկառքը մինչև կոմունիզմ կհասցնե՞նք:

—Կհասցնեք, ընկեր Լենին:

—Դեհ, յեթե այդպես է, արագ շարժվիր, քիչ է մնացել ...

—Պատրաստ ե, ընկեր Լենին:

Բշտիկներով և ծածկվել կաշին, սպիտակ բլրակների պես վրա յեն տալիս ալիքները, լիզում, պայթեցնում են բշտիկները:

Հանկարծ—կանգ է առում շոգեկառքը ... կզղի յե:

Կղզում ամառ է: Արևի լույսն է ծորում: Ձեփյուն է շոյում: Բողբոջների մեջ են տները:

Տներից ինչ վոր մարդիկ են դուրս դալիս:

—Բարև ձեզ, ընկեր Լենին. իսկ այս ձեր

Նեալի տղան ո՞վ է:

—Սա կոմյերիտական Նազարենկոն է:

—Վե՛չ, յես կոմյերիտական չեմ, ընկեր Լենին—կանոնադրության պահանջածից մի տարով փոքր եմ:

—Ա՛, այդպես է, հա՛:

Յեվ հարկարժ հանում է Լենինը մի բողբոջին նոր կոմյերիտական տոմս և վանկային և տալիս: Վանկան այդ տոմսում տեսնում է իր ազգանունը, անունը ... Ա՛խ ...

—Վանկա, այ վանկա:

—Ի՞նչ է, ընկեր Լենին:

Տրորում է քնաթաթախ աչքերը և Միտրիին է տեսնում:

—Ի՞նչ յեղավ տոմսը, տոմսն ո՞ւր է:

—Ի՞նչ տոմս:

—Միութենական տոմսը:

—Ու՛մ:

—Իմ:

—Վե՛րաեղից եր:

—Ընկեր Լենինն եր ավել ...

Յեվ հանկարծ հասկանում է վանկան, վոր յերազում է տեսել Լենինին ու այլևս վոչինչ չկա:

Դառնութեամբ պատմում ե Միտրիին:

Միտրին արտաշարժվում ե:

—Տեսնում եմ, Վանկա, վոր դու լավ կոմ-
յերիտական ես լինելու: Միայն թե յես ել հի-
մա քո դրութեան մեջ եմ—դու կոմյերիտամիու-
թյուն ես մանելու, իսկ յես՝ կուսակցություն ...
Ինչ պես յես ել եմ տանջվում, տարիքդ պակաս
ե, ասում են ...

Մեղմ դողանջի պես արձագանքվեցին Վան-
կայի սրտում յեղբոր խոսքերը:

—Ճիշտ ե, ճիշտ Միտրի, մեզ ուղիղ մեկա-
կան տարի յի պակասում: Ալի պայման կա-
պենք-գալ տարի յերկուսս միասին մանենք:

—Համաձայն եմ:

Մինչև լուսաբաց անրկներրի պես շրշեցին
նրանց լեզուները:

Նորից ե դժժում հեշտայեռը, կարծես կըտ-
րիչով յերկաթ են կտրում: Նորից լուսամուտ-
ների ապակիները քրտնած են: Հայրիկն ու Միտ-
րին լուութեամբ Վանկայի յերազն են լսում:

—Ո՞՞՞-ո՞՞՞-ո՞՞՞-ո՞՞՞ ... մայրը յերեսն ե
լսաշահնքում: Համա յերազներ ես տեսնում հա:

Յերկյուղածութեամբ Վանկայի առաջ նո-
րից հաց ե դնում:

Վանկան բոլորովին չի տեսնում մորը, չի
նկատում հորն ու յեղբորը:

—Այ, այսպես, կանգնած եր նա և ասում
եր. «Ի՞նչ ես կարծում, ընկեր Նազարենկո, կո-
մունիզմին կհասնենք, թե վոչ»:

«Կհասնենք, ասում եմ, ընկեր Լենին»:

Յեվ—մի բան, վոր յերբեք չեր պատահել
Վանկայի կյանքում—զգաց Վանկան, վոր յեր-
կարեց հայրիկի ուժեղ ձեռքը, սև ցախավելի
պես ծակծկող միրքի մազերն իրան դիպան:

Յեվ նրա այրվող շրթունքները չբի-չբի
Վանկայի փոքրիկ ճակատը համբուրեցին:

III

Մոխրագույն հալած օետինի պես ուռչում
են ամպերը յերկնքի շուռտված կաթսայում,
շրջակայքի գորշ դաշտի վրա յեն կախվում:
Թվում ե, թե իսկույն պլտի պոկվեն, շրփալով
ձյունի սառած շեղջի վրա թափվեն. կպչուն են.
կփակչեն շենքերին, հաստ շերտով յերկիրը
կծածկեն: Բակերից կեղտոտ վաակներ կհոսեն
դեպի Մոսկվա դետը: Հոսելով յերկար յերա-
կներ կըմեկնեն փշփշոտ փխրուն սառցի վրա:
Կրակ ե բասոնի*) պես իր ցոլքերը կթափի ա-
րեվը: Խեղդող կլինի ողբ և առավոտյան կշար-
ժվի Մոսկվա-դետը, կշարժվի առանց սառցի

*) Բասոնը նեղ ժանյակ և ժապավեն պատրա
տելու փոքրիկ մեքենա յե:

Ե
Ր
Ն
Ե
Գ
Ե



վորեք կտորի, մաքուր, ինչպես հալած մետաղը, իսկ թե դեպի ուր-հայտնի չի: Յե՛վ ապա կծաղկի բակը—փորթիկ, ծնոտը դեպի դաշտը կախած՝ բակը: Այտերին խոտ կբուսնի, և փշոտ թփերը գլուխները կհանեն թափթված երկաթեղենի արաքներին: Յե՛վ գործարանից մոտ կես վերստ հեռավորութեան վրա գտնվող այգում կպարեն ողի մեջ ծառերի սպիտակ, բայց ծաղիկների փոշուց դեղնագույն դառած, ծաղկաթերթիկները. աղվամազի սկես փափուկ կպարեն ողում ու կթափվեն ինչպես ունդառու ի թափվում ատաղձագործի դազգյանից: Իսկ հետո ատաղ կգա, քիփոպես մի ջահել ջուհակ կին, գույն-զգույն շրջազգեստը հագին և խախտով մանվածքը գրկին: Ծեր այգին կբրդոտվի ինչպես Կարլ Մարքսը, գանգուրներն ու միրուքը կոլորի... եքսկուրսիաների ծայրը կբացվի: Յերթասարգութեանը դեպի իր յենթաշեփ ժողանտխորհը կերթա: Կհանգստանան կոշտացած ձեռքերը, ուղեղներում նստած հոգսերը կթեթեվանան, տղաները գնդակ, վեզ, պահմտոցիկ, Ֆուտբոլ կխաղան .. ու մեկել տեսար աշուն և—աշուն և և ինքը—տասնուչորս տարեկան:

Գործարանային կոմիտեյի պատշգամբում վոզնու պես կուչ և յեկել Վանկան. Վանկայի սրտում—ինչ վոր թրթրու կա, բայց թե ինչ—

հայտնի չի: Մարտի ողը ցրտութեան և փոքր մարմնին, իսկ մարմնի ներսում—տաք խոխոջուն ուրախութեան կա:

Տասներեքն արդեն նախազգում են տասնչորսի գայլատոր: Համա թե տոնն լինելու հա՛վանկան ու Միտրին կգան հայրիկի մոտ ու կասեն՝ «Շնորհավորիր, ընկեր Ալեքսեյ, քեզ ել: Վորդիններիդ ել»: Ճիշտ այդպես կասեն: Յե՛վ տանը յերեք տոմս կունենան, վոչ, չորսը—Միտրին մինչև քսանյերեք տարեկան դառնալը դեռևս կոմյերիտական և մնալու—միաժամանակ թե կուսակցական, թե կոմյերիտական:

Յե՛վ յեթե պատերազմ ծագի, Վանկան կապի հորն, ինչպես մի ժամանակ Միտրին երատում. «ընդհանուր ժողովի վորոշման համաձայն՝ գնում եմ պաշտպանելու հեղափոխութեանը»:

Յե՛վ հայրիկը կասի՝ «գնա»: Վորովհետև նա կուսակցութեան անդամ և, վորոհետև նրա ձեռքերը կրակի գույնի կոշավածքներ ունեն:

Յերեկ մայրն և միայն, վոր լաց կլինի ու անվերջ կըկրկնի. «Ախր դու դեռ բոլորովին փոքր ես»: Յե՛վ այդ կվիրավորի Վանկային:

Բայց չե, մայրն այդպիսի բան չի ասի, վորովհետև Վանկան արդեն մեծացած և տասնչորսը լրացրած կլինի:

Պատշգամբում Վանկայի կողքին յերկու
աղջիկներ կային, փոքրիկ ութ տարեկան աղջիկ-
ներ, վորոնք որորվում և իրենց զոզոջունն մե-
կամաղձոտ ձայնով յերգում էին:

Միրում էյի, տանջվում էյի,

խակ նա - թողեց, հեռացավ:

Հնչյունները քարձրանում, լսելիքն էյին
հեղեղում, Վանկայի կողորդում յերգելու գրգիռ
էյին առաջացնում:

Յե՛վ նա իրոք յերգեց արաքաղի պես քո-
քեց ձայնը ու յերգեց:

Հառաջ դեպի արշալույսը,

ընկերներ, կովով գնանք.

դեպի գալիքի մեծ լույսը —

կովով հառաջ ընթանանք:

Քամին մեղմությամբ յերկրի յերեսին
մթնշաղի քոզն էր փռում, խակ քողը չէր փրո-
վում, խուսափում էր — մինչև վոր քամին կա-
տաղեց:

Քամին կատաղեց ու մթնշաղն իջավ — քա-
մին գոտով էր փռում նրա փեշերը, խակ դորձա-
րանից բանվորներն էյին տուն դառնում, և քա-
մին բանվորներին դեպի տուն էր քշում:

Յուրա սպում գեռես շարունակում էյին
մարտնչել յերկու յեղանակները. մեկը ձեռված,
վշապի, գեանաքարչ և հայցող, մյուսը՝ ձե-

ծող, փոթորկոտ և ամեն խնդիրք ու հայց
մերժող: Յե՛վ թվում էր, թե նրանք յերկուսն էլ
կանչում էյին — մեկը դեպի հեռ, դեպի աշուն,
— մյուսը դեպի առաջ, դեպի գարուն:

Արհեստանոցից խառան Վոլոդինը կամայ
քայլերով դեպի դարպասն էր գնում: Վանկային
տեսնելով, աչքով արեց ու կանչեց:

— Վան — կո՛ս...

Վանկան ցատկելով դեպի խառատը գնաց,
նրա ձեռքը բռնեց, փաղաքչեց:

— Հորեղբայր, մանում եմ...

Վոլոդինի դեմքին խորամանկ ժպիտ խաղաց,
սպիտակ ատամները վնց վոր սագսիի շար:

— Շատ յերկար ե տեսում:

— Ձե, հիմի Միտրիի հետ միասին...

— Ի՞նչպես Միտրիի հետ, յերբ վոր նա
ակտիվ անդամ է:

— Ձե, մենք պայմանավորվել ենք դալ տար-
վա համար. նա — կուտակցություն, յես՝ յերիա-
միություն — ինձ էլ, նրան էլ մի մի տարի յև
պակասում,

— Ահա թե ինչ. խոսք էք տվել իրար, հա՛:

— Այ՛ն. և նույնիսկ միևնույն օրը. բայց
զլխավորն այն է, հորեղբայր Վոլոդին, վոր հիմի
էլ ենքան վիրավորական չի — կնշանակի, մենակ
յես չեմ աչքովես...

— Ախ դու կաթնակեր, միթե դրանով քո վիշտը թեթևանում է:

Շփոթվեց, կարմրատակեց Վանկան. իսկ հետո՝

— Իհարկե թեթևանում է:

Կոշա մեծ մատները, տաք, տաքուկ մանուները Վանկայի ականջակոթերն են շփում, դեպի վիզն են անցնում, այտերն են կծմթում:

— Ե՛, Վանկա... ինչն է ձեզ դեպի կոմյերիտ-միություն քաշում. միայն այն վոր, բոլորն են կոմյերիտական:

Վանկայի մտքերը վոնց վոր բարակ ունդավուշ, իսկ ճակատին նույնիսկ հաղորդիչ ելեկտրալարերի պես են կուտակվում

— Վոչ, հորեղբայր Վոլոդին, դրանից չի այլ... գուցե չեմ իմանում, չեմ կարող ճշտությամբ ասել, բայց զլխավորն են ե, վոր ճառարխոսն ասավ, թե կոմսոմոլը յերիտասարգության ուղեղն է: Ուզում եմ, հորեղբայր Վոլոդին, ուղեղի մեջ լինել...

Թմբուկի հարվածներեն Վանկայի սրտի զարկերը, շունչը կտրվում է, իսկ մեծ ու տաք մատները ավելի ու ավելի խորն են գնում, և մեծ, բրդոտ կատվի պես լիզում, շոյում է Վանկայի նոզին՝ գարնան յերեկոն:

IV

Կիրակի, յերկուշաբթի, յերեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և նորից կիրակի, նորից յերկուշաբթի— ձգվում, յերկուրում է որերի ժանյակը:

Ահա պտտվեցին— յեկան պայծառ խայտաբեատ որերը: Կոմյերիտական ծննդի տոնն է. կարնավալ կազմած՝ դիմավորելու յելան: Վանկան սատանի դիմակով— փոքրիկ, սևուկ սատանի դիմակով, Ֆեդկան՝ սարկավազի, Միական՝ տերտերի, Միարին կախարդ կնոջ... ում ինչ դիմակ հասավ:

Ցատկուտում եյին վնգստալով, զրնգուն ձայներ հանում, յերգում, պարում եյին:

Առավոտը ուայն գնացին: Հանգիպեցին: Իրարը խառնվեցին: Հեղեղի պես փոփոցով, մայթով հուսեցին: Իսկ իրիկունը յերեկույթ կար: Աղջիկներն ու աղաները, հասակավորներն ու ծերերը НИ В БОГА, НИ В ЧОРТА.

Անցան տոները, վրա հասավ կամպանիան: «Նավատորմի» կամպանիա եր կոչվում. Յեկավ մի պորտֆելավոր ընկեր, ընդհանուր ժողովի կանչեց բջիջին, ընդհանուր ժողովի կանչեց բջիջը գործարանի յերիտասարգությանը: Ընկերը շեփության մասին խոսեց: Հետո մի վոսկեատամ ծովային յեկավ, նավատորմի գրության

մասին խոսեց: Վորոշեցին ոգնությունն ցույց տալ մարդով և փողով:

Մարդկային ոգնությունն են յեղավ, վոր Սենկային ավին: Ձեռքերի վրա բարձրացրին Սենկային բլիշում, ձեռքների վրա առան նրան ուայնում, ձեռքերի վրա ճոճեցին կարմիր հրապարակում: Յեզ դրանից հետո Սենկան հարբածի պես եր շրջում:

Աղջիկները մոտենում, անհանգստացնում եյին, նավաստիական շորերն եյին դիտում, նավաստիական քառյակներ եյին յերգում:

Ախ, իմ խնձոր, ուր յես գլորվում,
ախ, մարդու գնալ եմ ուզում...

Լենինին չե, վոչ ել Տրոցկուն—

նավաստիին, Բալտտորմիդի:

Նայում եյին նրան ձեր բանվորները, առում եյին. «Միայն սրանք են կարող փրկել նավատորմը»:

Մի խոսքով, Սենկան հերոս եր դառել:

Սենկային մինչև կայարան ճանապարհեցին: Խրատեցին. ստին՝ «մեզ ամոթով չթողնես». խոստացան նվերներ ուղարկել, խնդրեցին, վոր նամակ գրի: Հուզված եր Սենկան և ել առաջվա հպարտությունը շուներ: Խոստացավ բլիշի պատիվը չքցել:

Մնաս բարով, Մոսկվա, քո կոմսոմոլով:

դնում եմ նավաստի դառնամ իմ կամքով:

Յեզ յերբ վոր ուրախության հարբածությունն անցավ, նորից սկսեց մտածել Վանկան. շնու ե գալու արդյոք եզ աշունը և իր տուսը:

Արճեստանոցի աչքի ընկնող տեղում ձեր Պետրոն կպցրել եր՝

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱ- ԳՐՈՒԹՅՈՒՆ

.....

Վ. Բ. Լենինի առողջությունը նկատելի չափերով վատանալու պատճառով, այս սորվանից սկսած նրա առողջության մասին բյուլլետեն և հրատարակվելու:

Այդ աչքի ընկնող տեղի առաջ վաղ առաջ փոսից սկսած մարդիկ են խոնվում: Կարգում և լուս հեռանում են: Կնճոտավում են ճակատները, կուչ են գալիս ուսերը, սառչում են աչքերը կուպերի տակ:

—Վատ ե Վլադիմիր Իլյիչի առողջությունը...

—Վատ ե...

Իսկ ՌիՅեՄ բլիշում կարգում ե քարտուղարը

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ՈՒԿ 25-ամյա հորեկյանի մասին:

Կոմյերիամիության լավագույն նվերը կուսակցութեանն այն կլինի, վոր նա իր բանավորական բջիջներից ընտրովի աղաններ մտցնի կուսակցութեան մեջ:

Մ. Կ. Քարտա զար

Այդ սրը գործարանում գործ անել չեր լինում: Բանավորուհիները ձեռքերում թելերը կարատվում էյին և ժիր ձեռքերը չէյին կարողանում հաղթել կաշուն պողպատ և սարգերին *) Զուլնակները նախը ուղիղ չէյին կարողանում տալ, մեքենաները կանգ էյին առնում և վարպետների սրատես փորձված աչքերը չէյին կարողանում մեկ անգամից գտնել նրանց խանգարվելու պատճառը:

Արհեստանոցում, կոճակի բաժնում, գործարանի մյուս բաժանմունքերում նույնն էր, նույնխակ ձեր գարբինը, այդ բրզոտ, մագոտ մարդը, վոր յերբեք իր գործիքներից գատ ուրիշ վաճվոքի հետ չեր խոտում, նույնխակ նա անման չմնաց: Դարբինը խանձեց իր միջուկը, վորից

*) Սարգը մանող մեքենայի մասն է:

հետո ասով վանկային (վանկան նրա ոգնականին եր փոխարինում):

— Ե՛հ, բանս առաջ չի գնում:

Յեվ ադա, հոնքերը կիտելով և կրակի առաջը կտրելով վրա բերեց:

— Լսիր, ադա. թեև դու կոնցսով ես և ամեն ինչից, ինչպեսև աշխատանքից, գլուխդ վոչինչ չի մտնում, բայց ելի քեզնից ևմ հարցնում. ենդուր վոր ամոթ ե, վոր ինձ պես հալիվորը հասակավոր կամունիտաներից հարցնի: Չեմ սիրում յես դրանց — դրանք իսկական կամունիտներ չեն, մենակ իբանց ջերի համար են, իսկ անտես մարդի աչք — չունեն...

Վախ վանկան քրտինքն ել եր ձեռքով սրբում, քիթն ել: Յերբ այդ լսեց շակվեց ու ման ավեց աչքերը ձերուկի վրա:

— Յես, վարպետ, ուրախութեամբ...

— Ուրախութեամբ, յես առանց քեզ ել գիտեմ, վոր զրից անել կուգես, վորպեսզի շախատես — յես ձեր կաշին դաբախանից ևմ ճանաչում, շան աղերք... բայց դու, գիտես ինչ, դրուստն ասա...

Նրա ձայնը դողողաց:

— Դրուստ ե, վոր Իլյիչի առաջությունը... ըր՛ը... վատ ե...

— Դրուստ ե, վարպետ...

Ծերը լուռ յերկաթե կոճղին նստեց, յերեք անդամ խաչակնքեց յերեսը և շնչաց— «Տերը մի արասցե»...

Վանկան անվստահությամբ նրան դառավ.

— Ի՞նչ ե, չլինի Իլիշի կողմն ես, ծերուկ:

Ծերուկի շրթունքները չփշփացրին.

— Բա ել ս՛ւմ կողմը լինեմ:

Հրճվանքի այլքը Վանկայի ուղեղին զարկեց: Ձնգուն ձայնով, չարածճիտրեն կանչեց.

— Բայց չե վոր կամունիստ ե նա...

Դարբինը վտաքի յեղավ, ձգվեց իր աժդահա հասակովը մին.

— Վեր աշխատենք, լեզու քորելու ժամանակ չի:

Ու հազաց, վոնց վոր շնչափողը հացի կտոր ընկած մարդը կհագա: Յե՛վ յերբ վոր կրթակը նորից եր բորբոքվել, փչում եր փուքսը և թշուռմ եր յերկաթը, դարբինը դանդաղ ու դժկամ, յերկաթի գնդոցին արձազանքելով ասեց.

— Շատ ել թե նա կամունիստ ե— ամեն տեսակի կամունիստ կա:

Այ, թե վոր բոլորը նրա պես լինեյին, ել ըսելի կամունիզմ ել պետք չեր լինի, թե չե շատերը մեկնակ անսուսով են կամունիստ...

Իսկ պուզմենտի բաժանմունքում և արհեստանոցում խումբ-խումբ հավաքվում ու զրուցում եյին: Ու վոչ վոք չեր խնդրում, վոր ցրվեն: Յերիտասարդները նույնիսկ գնացին բակը: Շուտարայա Մանկան աչքերը դեպին գցել, թըլջված հով եր դառել:

— Տղերք, քարտուղարը վերտեղ կլինի:

— Թաղային կոմիտե յե գնացել:

— Ի՞սկ Միտրին:

— Նույնպես:

Կծկվեցին, կուչ եկան, ու սրտերն ել իրենց պես: Մքուքները պես են գնում-գալիս նախազգացումները:

Իսկ Վանկան լուսամուտից ե նայում: Վանկան յուրայինների մոտ ե ուզում գնալ: Սրտի դողով խորամանկության ե դիմում.

— Վարպետ, յես մի կընկի յետ կգամ: Ամեն ինչ կլիմանամ ու յետ կգամ:

— Վնաս չունի, գնա:

Ջընգզընգաց, ցնցուղեց իր ձայնը գործարանային դպրոցի գանդակը: Դուրս թափվեցին սովորողները: Կորոզ Պետկան սուղեց կանչեց

— Եղ ընչի՞ յեք եզպես քթներդ կախել, տըղերք:

Մանկան չարացավ.

— Ձգի՞տես միթե:

Լոյսդ Պետական ճառախօսի տեսք ընդունեց.

— Գիտեմ, հետո ի՞նչ, Հուսահատովեւոյ ինչ ողբաւ: Ետեղ ողնություն ե սկտք, բժիշկներ են պետք, փորովհետեւ փոշ մի աստփած մեզ չի խղճաւ: Իսկ բժիշկ առանց մեզ ել կկանչեն: Իսկ մեր գործը, տղերք, ահա թե ինչ պիտի լինի — ետը բջիջում շրջաբերական ե ստացվել կուսակցութեան հորելյանի մասին: Կուսակցութեանը պետք ե նավատորմին տված նվերից ավելի լավը սանք — եղ կլինի մեր ողնությունը Բլյիշլին: Վորովհետեւ կուսակցութեան աշխատողները քեզ են — հալից ընկել ե Բլյիշլը:

Տղերքի սիրտը միքիչ թեթեւացավ: Կարծես թե Լոյսդ Պետական յերկար փողի միջով փչեց նրանց սրտերին ե ժաքրեց սրտերն ու բացեց, հետ տարավ սրտերի կուշ յեկած պատերը: Կայծկրտացին, փթթեցին նրանց աչքերը բաց կողերի տակից:

Վախա Վանկան խոսեց...

— Տղերք, ո՞ւմ նվիրենք կուսակցութեանը:

— Պարզ ե, վոր վոչ քեզ փիշխուլ:

Ո՛հ, ինչպես խոցվեց Վանկայի սիրտը, ինչպես գլխին խփեց արյունը, կոկորդը ցամաքեց, լեզուն դամաղին կպավ: Շփոթվեց ու շնչաց

— Յես... յես իհարկե իմ մասին չեյի ասում:

— Իսկ թե քո մասին չեր, կտարած գդալի

պես մեջ մի ընկնիր:

Պոչը քաշեց Վանկան, հեռացավ: Շատ եր ուզում առաջ ու առաջ մի լավ դմբուզ հասցրենել Մանկայի ղնչին ե հետո բարձր ձայնով ասել բոլորին. «Թե ուզում եք իմանալ, բոլորդ ել իմացած լինեք, վոր Միտրին — իսկ դուք անպատճառ Միտրիին եք ընտրելու — վոր Միտրին չի մտնի կուսակցություն, մինչև վոր ինձ ել յերիամիություն չընդունեք, վորովհետեւ այդպես ենք մենք պայմանավորվել — ինձ ել, նրան ել մի մի տարի յե պակասում:» Բայց չասավ — թող Միտրին ինքն ասի ժողովում:

Իսկ Չուստրիկ Մանկան ծանրութեամբ ասեց.

— Ճիշտ վոր: ո՞ւմ առաջարկենք:

Սենկան մտախոհ վրա բերեց.

— Յես կարծում եմ, վոր դա «բյուրոյի» գործն ե. ում կառաջարկեն, նրան ել կընտրենք վորովհետեւ . . .

Լոյսդ Պետական ընդհատեց, կտրտավելով.

— Վորովհետեւ — ապուշ ես... Յեթե ուզում ես ահա թե ինչ կասեմ: Ել ի՞նչ հորս ցավի կոմսոմոլն ես, վոր ամեն ինչ բյուրոն պետք ե վորոշի, իսկ դու մի գրողի ինքնագործունեյություն ել չպետք ե ունաս:

— Իսկ բյուրոն ընչի՞ համար ե, կարծում ես

սուրհանդակի պես վազվզելու համար ե ընդրված,
ինչ ե:

Մանկան հաշտեցնող յեղանակով ասեց.

— Թողեք, տղերք, դատարկ տեղը վիճելը
խնարկե, պետք ե քննել:

Մենիկան, զգալով, վոր պարտվելու յե,
ծառս յելավ ե բուռնցքները սեղմեց.

— Թող եղպես լինի, թող քննեն. իսկ հիմի
դու ասա, թե յես ընչի յեմ ապուշ, ասա: Ընչի
յեմ ապուշ:

Շրրբմփ լուրգի աջ կողին:

— Այ քեզ ապուշ: Կերանք գտում եք ու
փրփրում:

Լուրգ Պետկայի դեմքը ծամածուփեց.

— Ախ դու, շան բերնից ընկած, դե սպա-
սիր յես քո եզ ոեխը տափակացնեմ:

— Այ բեզ, այ քեզ, այ քեզ, ֆաշխատի գա-
վակ:

Կոխվ բացվեց: Կամաց—կամաց կովին բու-
լսրը մասնակցեցին:

Վանկան հաճույքով Մանկայի վրա պրծավ:
Ուզում եր աչքի տակին մի լավ դմբուզ հաս-
ցնել, բայց ձեռքը չհասավ, կատարությունից
սկսեց կրծքին խփել:

Արհեստանոցից անկուսակցական բանվոր-
ներն յեկան, պուզմենտի բաժանմունքից՝ բան-
վորուհիները:

— Այ-այ-այ, տեսեք ի՞նչ են անում, կոն-
յստոն ընչով ե պարսպում:

Բակից մի վարպետեր սնցնում:

Տեսավ ու կանչեց.

— Դե շուտ, ցրվեցեք որանով հետս կը-
զբաղվեք...

Յեվ յերբ վոր ցրվում էին, հրճվում եր
Վանկան, զգում եր—մոռենում ե վաղուց ցան-
կալին, մոռ ե, մոռ ե: Վո՞նց ե նախանձից
ուրաքելու հայհոյարան Մանկան:

Մյուս առավոտ կոմյերիտականները ակումբ
էին հավաքվել: Քարտուղարը, վոր միևնույն ժա-
մանակ կուսակցության անդամ եր- կուսակցու-
թյան, Լենինի, կոմյերիտականների մասին խո-
սեց: Ասեց, վոր հիմա Վլադիմիր Իլյիչին ոգնա-
կաններ են պետք խիստ հոգնել ե ինքը: Իսկ
ողնականներին կոմյերիտությունն ե պատ-
րասում: Հիմի այդ ոգնականը տալու ժամա-
նակն ե:

Ամեն ինչ հասկանալի, պարզ ե Վանկայի հա-
մար: Բայց յեթե հանկարծ Միտրին համաձայ-
նվի, ինչ կասեն տղերքը Վանկային: Ինչ կասի
խառատը Անտիպիչը: Վո՞չ, այդպիսի բան չի կա-
րող պատահել: Չե՞ վոր պայմանավորվել են:
Համ ել քարտուղարը կասի, վոր չի կարելի կա-
նոնադրության պահանջած ապագայը:



Նախադահր - մի ժիրզուիս մարդ - մեկ ան-
 դամից յերկու դանդ եր հնչեցնում՝ մեկը պղնձե
 դանդը, մյուսն իր կոկորդինը. իր գործը լավեր
 հասկանում:

— Ընկերներ, բջիջի բյուրոն Սերգեևա Ան-
 նային և առաջարկում, վոր 19 տարեկան և, և
 Նազիրենկո Միարիին, վոր 17 տարեկան և: Գը-
 րանց կարծեմ բոլորդ եք ձարաչում. իսկ իրենց
 համաձայնությունը ավել են:

Չայներն ի պատասխան, ինչպէս մեզ վանու-
 ցի գվվոց, լավեց:

— Լավ և... գիտենք... համաձայն ենք...
 հենց դրանց եյինք ո զում առաջ քաշել...

Նայում և Վանկան յեղբոր կողմը, տեսնում
 և— յեղբոր աչքերն անսովոր կրակով են վառ-
 վում:

Բայց ինչո՞ւ չի առարկում քարտուղարը:

Քարտուղարը համաձայն և:

— Ուրեմն ընդունված և համարվում:

Ել չլսեց Վանկան, թե ինչ խոսեցին գրա-
 նից հետո, գրաց միայն, վոր մթնում են անում
 աչքերը, պտույտ և գալիս գլուխը, — շուրջը՝ աղա-
 ներ, սեղաններ, աթոռներ — և աղաները, սեղան-
 ներն ու աթոռներն իրար են խառնվել:

Ախ... ինչ պատահեց, չլինի թե ուշաթափ-
 վեց Վանկան:

— Ի հարկ և:

Զնգզնգացին, վժժացրին խոսն ձայներ,
 բարձր, զիլ ձայներ:

— Տեսնես ինչից ևր:

— Յերևի ուրախությունից. յեղբորը, Միա-
 րիին, կուսակցությանը հանձնեցինք:

— Չե, ուրախությունից չե՛ գիտես ինչ,
 նրանք պայմանավորվել ևյին միասին մտնել

— մեկը՝ կուսակցութուն, մյուսը՝ կոմյերիա-
 միություն: Մրաին դիպել և աղայի... վոր ինքը
 դուրսն և մնում:

— Այ թե ինչ: Մի՞թե նա գեռ կոմյերիաու-
 կան չի:

— Հենց այդ և, վոր չի: Նա տասներեքի մեջ և
 և, վոր գլխավորն և, մեզ մոտ միայն դա յե այդ
 տարիքին, թե չե պատկոմական կողմակել պու-
 թյուն կատեղծեյինք...

Գիշերը տաք եր, կիսագարնային: Յերկնքի
 շուռ տված կաթսայում կապույտ ներկի լուծ-
 վածքներ ևյին ծփում: Որորվելով լողում ևյին
 լուծվածքի մեջ կոճակների սպիտակ գլուխները,
 լուսատարիկներ հիշեցնող կոճակի պլուխները,
 վորոնք կոճակների բաժնում յեղածներին են
 նման:

Տնակների գարդամների առաջ յերիտասարդ-
 ները հավաքվել ևյին լսող ու գրույցի:

Իսկ իրենց տանը, մահճակալի վրա, վան-
կան եր պառկել փոքրիկ աննկատելի գնդի պես:
Կայծակների պես, կայծակների պես եյին փայ-
լատակում մտքերը: Հարցերի կապուտակ ծուխն
եր բարձրում: Յե՛վ վառվում եր ու այրվում
մտքերի յուզը ուղեղի մեքենայի մեջ:
«Այս ի՞նչ ե... ի՞նչ ե... իրավացի չե, թե անի-
րավացի Միտրին»:

Գալարվում եյին, պոկվում իրարից մտքե-
րի սանդառնները, նորից եյին փոթաթփվում ի-
րար, կրակե ողակի մեջ եյին առնում վան-
կայի գլուխը ու մի հարց եյին դառնում.

«Վճռն ե ավելի կարևոր – վանկայի կոմյե-
րիամիություն ընդունվելը, թե Միտրին ու Լե-
նինին սոցները»:

V

Մ...րտի լույս տաաներկուսի գիշերը Մոս-
կվայի Սամովնիկյան թողում, յերկրորդ համա-
լսարանը ծաղկել եր: Ծաղկել եր հին լսարանը,
վոնց վոր յեղրեվանին ե ծաղկում: Յե՛վ զրանից
յեղրեանու գույնի են դառել գորաբանակի գլբադ-
վար ընկ: Անտոնովի գույնագուրկ դառած աշջե-
րը, և յեղրեանու յերանգ եր առել նրա ճաքած
գործիքի հնչյուն հիշեցնող ձայնը, վորովհետև
նա կուսակցության հորելյանի մասին եր խո-
սում:

Անտոնովից հետո Տրուբան խոսեց, հիշելով
թագավորական կարգերի ժամանակվա իրենց
գաղանի գործունեությունը: Սոսեցին և հիշո-
ղություններ պատմեցին նաև ուրիշ – նույնպի-
սի գուհա գուրկ աչքերով – ընկերներ: Նրանց ճա-
ռերը հեռավոր բանդերում թառամած հուշերի
յեղրեվանիներին եյին հարություն տալիս:

Վտղկույզ առ վտղկույզ ցրում եյին դանլի-
ճում, յերիտասարդ գյուխներն եյին զարգարում
յեղրեվանիներով:

Յե՛վ լայնածավալ դանլիճի բոլոր ծայրերից,
գյուխների վրայով, մագելի մամուռի վրայով
ձգվում – յերկարում եյին գրությունների ճեր-
մակ ժապավենները:

Այդ գրություններով առաջարկում եյին
վողջույններ ուղարկել Լենինին, շուտափույս
առողջացում եյին ցանկանում նրան և լավ թե
վատ, հարթ թե անհարթ գրված այդ թղթերից
ձեռքերի կոշտվածքների, քրտինքի և չհերկած հո-
ղի հոտեր դալիս:

Յե՛վ յերբ վոր ընտրված կոմյերիտական-
ներին կուսակցությանն եյին հանձնում և հանձն-
վողներից ամեն մեկը, անգսպելի գգացմունք-
ների հորդմունքը հազիվ գսպելով, ժողովական-
ների շարքերի միջով դեպի ստանձին գրված
սեղան եր գնում, ստանում եր թեկնածվական

քարտը, Բուխարինի գրքույկը և հարեյանական նշանը—ձեռքերի կատաղի ծափերից, կանչերի աղմուկից, կեցցեաների զողանջից շնչահեղձ եր լինում գահլիճը և յերաժշտութան ձայնը թող-վում եր մանուկների ձայների ծովում:

Մըրկի պես դեպի վեր եր բարձրանում փոթորկալից հրձվանքը: Կատաղի գրոհով պատե-րին եր զարկվում: Յեվ լսարանում չկար Վանկա, ինչպես վոր չկային նայել ուիչ Վանկաներ, Կոլյաներ, Պետյաներ, Դունյաներ և Մանյաներ: մի բյուրաչքանի, բյուրապուլս վիշապ կար, մի ուրախությամբ եր արոփում նրա կուրծքը, մի սեր եր բոցկլտում նրա սրտում, անձնվիրու-թյան մի գգացմունք և գոհաբերություն մի պատրաստակամություն կար նրա մեջ:

Յեվ յերբ վոր ամբիոնին Միտրին եր մտե-նում, Վանկան, քանի թոքերումն ուժ կար, կան-չեց, կատաղի լարումից աչքերը փակելով:

—Միտրի, չամաչեցնես կոմյերիտմիու-թյունը: Իլիչի ազնիվ ոգնականը յեղիր:

Յեվ չորս կողմից ամենքը դեպի Վանկան դարձան, տեսան նրա անշուք արտաքինը՝ ուրա-խության հորձանքի մեջ լողալիս:

Իսկ Վանկան դուրս քաշեց գրպանից ծո-ցտետորը, մի թերթ թուղթ պոկեց և սկսեց ձեռքի տենդաղին, անհաստատ շարժումով ծուռ

ու մուռ սողերով ինչ վոր բան գրել, հետս թուղթը իր հարեվանուհուն ավեց և շնջաց:

—Գրեցեք...

—Գրում եմ...

—Մեկ ել... շատ եմ խնդրում մեր վող-ջույնը հայտնել... պրոլետարյատի թանկագին առաջնորդ Վ. Ի. Կենինին:

Վ. Ն.

Ընկ. Սվերդլովի անվան
ժանյակի գործարանից:—

Յեվ փոքրիկ մակույկի պես՝ հետ ընկած, մենակ մնացած գրությունը դեպի նախագահ կողաց. քիչ ել, քիչ ել. անա. ստացավ, բացեց, լծպտաց:

—Ընկերներ, Վլադիմիր Իլիչին վողջույն ուղարկելու մի առաջարկ ել ե ստացվել: Առար-պոյ չկա:

Առարկող չկար:



ԼՈՒՅՍ ԵՆ ՑԵՍԵԼ

1. Մրազիր Քաղաքազիտության միասնական սիստեմի գինը 10 Կ.
2. Ռ. Կ. Յե. Մ. դրությունն ու հերթական խնդիրներ:
3. Վ. Ի. Լենին (Կ Յեմ. վերանվանման առթիվ) գինը 20 Կ.
4. Ռ Կ Յեմ ծրագիր.
5. Ռ Կ Յեմ կանոնադրություն.
6. Առաջին կարգ. (ձևանարկ. պատկոմական գիտելիքներ) գինը 15 Կ.
7. Լենինը և կոմյերիտականները. Լազար Շացկի 10 Կ.
8. Ի՞նչ ասել և Լենին Ս. Զորին գինը 8 Կ.
9. Տասնյերեք տարեկանը (պատմվածք) Մարկ. Կոլոսով գինը 25 Կ.

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՆ ՀԱՆՁՆՎԱԾ

1. Լենինը վերպես մարդ Զ. Լիլին
2. Հ. Կ. Յեմ. կոնսուլի IV պլենումի բանաձևերը:
3. Բնագիտական զրույցներ Հ. Հովհանեսյան.
4. Մրազիր Լենինիզմի ուսումնասիրության խմբակի
5. Մարտական զիրքերում. կանատիչկով.
6. Ասորյա (պատկերազարդ պատմվածք) Իզոր Կոզլով.

Դիմել՝ Լ.Կ.Յե.Մ. Կենտրոնի մամուլի լեկտորախումբին.
Յերեբանի Ռուբինի № 9

«Ազգային գրադարան»



NL0316355

